ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր.գ. թ., ավագ դասախոս Արսեն Ավետիկի Մանուկյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Պայմանագրային իրավունքի հիմնահարցերը

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

1.1. Պայմանագրային իրավունքի հիմնական հարցերից են պայմանագրերի դասակարգումը, բարեխղճության սկզբունքը, նախապայմանագրային պատասխանատվությունը, պայմանագրերի կնքման և կատարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև դրանք դադարեցնելու և անվավեր ճանաչելու դժվարությունները: Կարևոր են նաև պայմանագրային ազատության, էլեկտրոնային գործարքների և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վեճերը: Այս առարկան սերտ կապված է մասնագիտության ուսումնական ծրագրի այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Քաղաքացիական իրավունքը», «Գործարար իրավունքը» և «Աշխատանքային իրավունքը», <<Միջազգային մասնավոր իրավունք>>, «Կորպորատիվ իրավունքի արդի հիմնահարցերը», «Պայմանագրային և իրավաբանական աշխատանքը կազմակերպություններում», «Թվային իրավունք», «Սնանկության իրավական կարգավորումը», «Մտավոր սեփականության իրավունքը», <<Ներդրումային իրավունքը>>: Այս առարկան ունի և՛ կիրառական, և՛ տեսական բնույթ՝ ներառելով պայմանագրային իրավունքի տարրեր և համադրելով դրանք կորպորատիվ իրավաբանի կամ կազմակերպության շրջանակներում պայմանագրային գործունեությամբ զբաղվող այլ իրավաբանի առօրյա աշխատանքի գործնական հմտությունների հետ:

1.2. Դասընթացը պահանջում է 3 կրեդիտ (108 ակադեմիական ժամ), որից հետո վերջնական գնահատականը տրվում է քննության տեսքով:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել պայմանագրային իրավունքի հիմնական սկզբունքները, ձևավորման և կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև զարգացնել նրանց իրավական վերլուծության և պայմանագրերի կազմման հմտությունները:

Դասընթացի խդիրները.

- Սովորեցնել պայմանագրային իրավունքի հիմնարար հասկացությունները
- Ուսումնասիրել պայմանագրերի տեսակները, առանձնահատկությունները և կառուցվածքը

- Ուսանողների մոտ զարգացնել պայմանագրերի կազմման և վերլուծության գործնական հմտություններ
- Ունակ լինել վերլուծելու դատական պրակտիկան և պայմանագրային վեճերը

Դասընթացի օբյեկտը և առարկան

Պայմանագրային իրավունքի օբյեկտը և առարկան պայմանագրերի կնքման, կատարման և դադարեցման արդյունքում ծագող քաղաքացիական իրավական հարաբերություններն են: Դրանք ներառում են նյութական և ոչ նյութական ակտիվներ (գույք, աշխատանք, ծառայություններ), որոնց վերաբերյալ կողմերը կնքում են պայմանագիր, ինչպես նաև կողմերի գործողությունները (կամ գործողություններից ձեռնպահ մնալը): Չափազանց կարևոր նշանակություն ունեն նաև պայմանագրերի կատարման ապահովման եղանակները(տույժեր, գրավ, երաշխավորություն և այլն), որոնք որպես իրավական գործիքներ, երաշխավորում են պարտատիրոջը պայմանագրով սահմանված գումարը ստանալու իրավունքը: Դրանց հիմնական նպատակն է խրախուսել պարտապանին կատարել իր պարտավորությունները և փոխհատուցել պարտատիրոջ կորուստները խախտման դեպքում՝ նվազագույնի հասցնելով տնտեսական ռիսկերը:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքն ապահովում է անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները ՝

1. Պայմանագրերի դասակարգումը, բարեխղճության սկզբունքը, նախապայմանագրային պատասխանատվությունը, պայմանագրերի կնքման և կատարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև դրանք դադարեցնելու և անվավեր ճանաչելու դժվարությունները:

2. Պայմանագրի ազատության, կամքի ինքնավարության և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վեճերը:
3. Պայմանագրերի կատարման ապահովման եղանակների կիրառումը
4. Էլեկտրոնային հարթակների միջոցով պայմանագրերի կնքման և թվային լուծումների տիրապետումը

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***
- Ուսանողը կարող է ինքնուրույն կազմել տարբեր պայմանագրեր և իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են հայցադիմումները, հարցումների պատասխանները, նամակները՝ պահպանելով բոլոր անհրաժեշտ ձևականությունները և իրավական պահանջները.
- Ուսանողն ունակ է նկարագրել քաղաքացիական, գործարար, կորպորատիվ իրավունքի հիմնական սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև դրանց փոխկապակցվածությունն ու նշանակությունը մասնագիտական գործունեության համատեքստում:
- Զարգացնել ուսանողների իրավական մտածողությունը և վերլուծական հմտությունները
- Ձևավորել պայմանագրերի կազմման պրակտիկ ունակություններ

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Պայմանագիր և օրենք
2. Պայմանագրերի կատարման ապահովման եղանակներ
3. Պատասխանատվությունը պայմանագրային պարտավորությունների կատարման համար

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասախոսություններ, սեմինարներ, գործնական աշխատանքներ, պայմանագրերի կազմում, դատական խաղեր, տեսական հանձնարարություններ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Պայմանագրային իրավունքի հիմնահարցերը»՝ 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-ին ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**36**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**20**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**20**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**10**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**10**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**

1	2=3+4	3	4
Թեմա 1. Ներածություն պայմանագրային իրավունքին	**4**	**2**	**2**
Թեմա 2. Պայմանագրի կնքում. Պայմանագրի ազատության սկզբունքը և հասկացությունը	**4**	**2**	**2**
Թեմա 3. Պայմանագրերի դասակարգումը և տեսակները	**4**	**2**	**2**
Թեմա 4. Խառը պայմանագրեր	**4**	**2**	**2**
Թեմա 5. Ֆինանսական պայմանագրեր	**4**	**2**	**2**
Թեմա 6. Պայմանագրի կատարում. Պայմանագրերի կատարման ապահովման եղանակները	**4**	**2**	**2**
Թեմա 7. Պայմանագրի փոփոխումը և լուծումը	**4**	**2**	**2**
Թեմա 8. Պայմանագրային վեճերի լուծումը և դատական պրակտիկան	**4**	**2**	**2**
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Ներածություն պայմանագրային իրավունքին

Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը. Իրավական հարաբերությունների հիմքերը. Պայմանագրերի մեկնաբանումը

Թեմա 2. Պայմանագրի կնքում. Պայմանագրի ազատություն

Պայմանագրի կնքումը. Օֆերտա և ակցեպտ. Պայմանագրի ազատության սկզբունքը՝ հասկացությունը և գործնական նշանակությունը: Էլեկտրոնային հարթակներ՝ պայմանագրերի կնքումը էլեկտրոնային եղանակով

Թեմա 1. Պայմանագրերի դասակարգումը և տեսակները

Գույքի օտարման պայմանագիր. Գույքի օգտագործման և վարձակալության պայմանագիր Ծառայությունների մատուցման պայմանագիր

Թեմա 4. Խառը պայմանագրեր. Հասկացությունը, տարրերը, տեսակները (Կոնցեսիա, կոնտրակտացիա, այլ) և կիրառելի օրենսդրությունը, Պետություն և մասնավոր համագործակցություն/ՊՄԳ

Թեմա 5. Ֆինանսական պայմանագրեր. Տեսակները՝ Վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն/լիզինգ, Ֆակտորինգ, բանկային ավանդ, բանկային հաշիվ, ապահովագրություն:

Թեմա 6. Պայմանագրի կատարում. Պայմանագրերի կատարման ապահովման եղանակները Պայմանագրային պարտավորություններ, Պայմանագրային արտավորությունների խախտում. Պատասխանատվություն և տույժեր

Թեմա 7. Պայմանագրի փոփոխումը և լուծումը. Պայմանագրերի փոփոխումը էական հանգամանքների ուժով

Թեմա 8. Պայմանագրային վեճերի լուծումը և դատական պրակտիկան

Պայմանագրային վեճերի լուծման եղանակները, վեճերի լուծումները դատական կարգով, վեճերի լուծման այլընտրանքային եղանակները: ՎԴ նախադեպային որոշումներ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1 Договорное право : учебник для вузов / А. П. Анисимов, М. Ю. Козлова, А. Я. Рыженков, С. А. Чаркин ; под общей редакцией А. Я. Рыженкова. — 8-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2026.

2. Гражданское и торговое право зарубежных государств: Учебник: В 2 т. / Отв. ред. проф. А.С. Комаров, проф. А.А. Костин, проф. О.Н. Зименкова, доц. Е.В. Вершинина. Т. 1 : Общая часть.–Москва: Статут, 2019

3. Зайцев О.В. Современные проблемы доктрины гражданского права. – М.: Статут, 2017.

4. Российское гражданское право: Учебник: В 2-х томах. Том II. Обязательственное право / Отв.ред.Е.А.Суханов. —М.: Статут,2011.

5. Шевченко А.С., Шевченко Г.Н. Деликтные обязательства в российском гражданском праве: Учебное пособие. — М.: Статут, 2013.

6. Гражданское право. Отдельные виды договоров. Сергей Соломин и Наталья Соломина, Юстиц, 2018 г.

7. Договорное право. Курс лекций. Виктория Калемина и Елена Рябченко, 2009 г.